Ասում է.

– Իմ գառն առեք, քեֆ արեք: Ես էլ գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ:

Գնում է, գալիս, թե՝ իմ գառը հետ տվեք: Ասում են.

– Գառը մորթել ենք, հարսանիք ենք արել, որտեղի՞ց տանք:

Ծիտն ասում է.

– Իմ գառը տվե՛ք, թե չէ՝ դես կթռչեմ, դեն կթռչեմ, հարսին կառնեմ, դուրս կթռչեմ:

Ու հարսին առնում է, թռչում:

Գնում է, գնում, տեսնում է՝ մի գուսան ճամփով գնում է:

Ասում է.

– Գուսա՛ն ախպեր, էս հարսին պահի՛ր քեզ մոտ: Ես էլ գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ:

Գնում է, հետ գալիս, գուսանին ասում.

– Իմ հարսը ինձ տուր:

Գուսանն ասում է.

– Հարսը գնաց իրենց տուն:

Ծիտն ասում է.

– Իմ հարսն ինձ տուր՛, թե չէ՝ դես կթռչեմ, դեն կթռչեմ, սազիկդ կառնեմ, դուրս կթռչեմ:

Գուսանը սազիկը տալիս է: Ծիտը սազիկը վերցնում է, թռչում նստում է ծառին ու երգում.

– Ծի՛վ, ծի՛վ...

Փուշիկ տվի, լավաշ առա,
Լավաշ տվի, գառնուկ առա,
Գառնուկ տվի, հարսիկ առա,
Հարսիկ տվի, սազիկ առա,
Սազիկ առա, գուսան դառա,
Ծի՛վ, ծի՛վ...